ՑԱՌԱՋԱԲԱՆ

Առաջին անգամ դեռ հինգ տարիս չլրացրած, 1864 թ. Մայիսին ինձ տարին Կարսից Արդանուշ։ Տախտը-Շահվանում (դեսպակ) նստած էի մօրս եւ փոքր քրոջս հետ, որը կապուած էր երկու ձիու մէջ, մինն առաջեւից էր գնում, միւսը ետեւից եւ մենք այդ արեւելեան դեսպակի մէջ նստած կատարեցինք 200 կիլոմետր ճանապարհորդութիւնը երեք օրուան ընթացքում։ Պէտք է յայտնեմ, որ այդ ժամանակ Կարսից-Արդանուշ ո՛չ թէ խճուղի, այլ սայլի ճանապարհ էլ չկար. միայն կարաւանի ուղի կար, որից անցնում էին ձիերի կամ ջորիների շարքերը մէկ – մէկ – իրար ետեւից։ Եթէ լեռնալանջից որեւէ ձի կամ ջորի սայթաքէր, կարող էր գլորուել իր բեռով մինչեւ ձորի անդունդը, որին այլեւս փրկութիւն չէր կարող հասնել։ Տափարակներում թէ հովիտներում շատ տեղ բնական լայն ճանապարհներ կային, որտեղից անվտանգ անցնում էինք. պէտք էր զգուշանալ միայն անդունդների բարձր լանջերում փորուած կամ մաշուած նեղ նեղ կածաններից անցնելիս։